<<ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆ.
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
077 625662

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ 18

<< 17>> << 10 >> 2023թ.
№ 0-55

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ «Բաղրամյանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ում առկա է դասվարի, մաթեմատիկա /11 դասաժամ/, շախմատ /5դասաժամ/ , ռուսաց լեզու /11 դասաժամ/,ինֆորմատիկա /4 դասաժամ/, թգհգ-/2դասաժամ/առարկաների ուսուցչի թափուր տեղ :
Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Դպրոցի տնօրեն Ն.Տոմիկյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի /գ.Բաղրամյան Պ.Մեսակ 18/ դասվարի, մաթեմատիկա /11 դասաժամ/, շախմատ /5դասաժամ/ , ռուսաց լեզու /11 դասաժամ/,ինֆորմատիկա /4 դասաժամ/, թգհգ-/2դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար.

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկան են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում.հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան Պ.Սևակ 18 :

Տեղեկությունների համար զանգահարել (077) 62-56-62 հեռախոսահամարով:

<<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն